ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՔՐԻՍՏԻՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Վարդանյան,

ի պատասխան Ձեր 30.11.2023թ. գրության՝ տեղեկացվում է, որ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը Ուլնեցու փողոցում փոխարինման և վերաձևափոխման աշխատանքներն իրականացնում է համաձայն 2023թ.-ին սկիզբ առած «Երևան համայնքում կենսունակության ավարտին մոտ գտնվող և ամբողջովին դեֆորմացված ծառերի փոխարինում արժեքավոր և գեղազարդ ծառերով: Ինվազիվ ծառերի հեռացում» ծրագրի և Երևան քաղաքի ավագանու 18.11.2009թ. N 36-Ն որոշման 12-րդ կետի 2-րդ ենթակետի:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ծառահատման տոմսերը կազմվում են տվյալ վարչական շրջանի դենդրոլոգի, ստորաբաժանման պետի, գլխավոր դենդրոլոգի ստորագրությունների հիման վրա, որից հետո միայն վավերացվում կազմակերպության տնօրենի կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ